


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դր՝ Կ. Պետրոսյ 40 ՏՃՃ.
Վեցամս. : Կ. Պետրոսյ : 22 »
Պատր երկիրներու : 2 1/2 լ.
Մանուցման տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրաչ, երկու անգամի հա-
մար 2 դուր հ. աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կըլ-
այ :
Խորանշիւր թիւ 40 փարա արծւ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՈՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքայ խմբագրութեան վրայ է :
Լրագրաց փրարներէ ալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին ակն աւելուի : Գալա-
թիա Սանտրոքթար ճառարի թիւ
193, Նոթո խան, Մասիսի գրասե-
նակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չապուած նամակ, յողուած, ե-
տ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ կայսեր ձեռնադրան սյա-
լատին սեղանատան ներքեւ պատ-
րաստուած տկոնին պայթուցման
առթիւ երեսն ելած նոր դաւադը-
րութիւնը չէր կրնար առանց հրոկո-
ղութեան խառութիւնն աւելցնելու
անցնիլ : Կերեկի որ ոստիկանութիւնն
և զինուորական իշխանութիւնք նո-
րանոր միջոցներ ձեռք առնելու դա-
շած են : Բեղ-բաղուրկի զինուորական
հրամանատար կուրքո զորավարն յայ-
տարարութիւն մը հրատարակեց բա-
նակին ուղղեալ, ուր կըսէ թէ յե-
ղափոխական շարժումները չեն կըր-
նար Ռուսական զօրաց հաւատարմու-
թիւնը խախտել : Անցեալ դեկտ. ամ-
սոյ մէջ կայսեր կառավարութիւնն ներ-
քեւ ական դնող դաւադրաց մին լի-
նելու կասկած տուող շարժման ա-
նուն երկատարու. Ռուս մը փարիզի
մէջ ձեռքադրուած է, և Ռուսիոյ կա-
ռավարութիւնը կը պահանջէ եղեր որ
իրեն յանձնուի : Սակայն որովհետեւ
ոճիւրջ քաղաքական է և ոչ պարզ ե-
ղեռնագործութիւն, չգիտցուիր թէ
արդեօք Գաղղիոյ կառավարութիւնը
պիտի յանձնէ՞ զայն Ռուսիոյ թէ ա-
նոր դատը Գաղղիոյ եղեռնական դա-
տարանաց պիտի յիշէ : Ինչ որ է, այս
հետեւհետեւ պատահած դաւադրու-
թիւնը, ինչպէս նաեւ Բեղ-բաղուրկի մէջ
եղած հրատարակութիւնը կըցուցնեն
թէ Ռուսականութիւնը, կամ որ նոյն
է յեղափոխական կառավարութիւնն
անհզ կազմակերպութիւն մ'ունի, ու-
րով ամեն ծայրայեղ միջոցներու ձեռ-
ներէց կը գտնուի : Երբ մտածուի թէ
Ռուսիոյ ոստիկանութիւնը նշանաւոր
է իւր ունեցած միջոցներով թէ «կայ-
սերական քարաւորութեան երրորդ
բաժին» անուամբ պաշտօնարան մը
կայ ընդ ուղղակի հակողութեամբ
Չարին, որ ամեն օր իրեն ուղղուած
գողանի տեղեկագրերը կը կարդայ,
և հասարակութեան մէջ անցած ա-
մենափոքր դէպքերուն վրայ տեղե-
կութիւն կ'առնու, թէ պաշարման
վիճակ, զինուորական իշխանութիւն
և ամեն կերպ զսպողական միջոցներ
ձեռք առնուած են, անհնար է չը
զարմանալ թէ ինչպէս դաւադիրը
դարձեալ գլուխ կը վերցնեն, և նոյն
խիկ կայսեր սեղանատանն ականաւ
կը պայթեցնեն : Սակայն իրողու-
թիւնը կը ցուցնեն թէ յեղափոխա-
կանաց մէջ զարմանալի կարգապա-
հութիւն կայ, որով կարող կը լի-
նին դաւադրութիւններն առանց վի-
ժելու գործադրել : Բանդի կայսրը
նախախնամական դիպուածով մը մի-
այն կըցաւ մէկ տարուան մէջ պա-
տահած երեք դաւադրութեան ա-

դատիլ : Իսկ այն ոստիկանութեան և
փարչութեան հսկայ մեքենայն, ու-
րոյ համար մեծագուտնը ծախք կը
լինի, ոչ կըցաւ առաջուց տեղե-
կութիւն առնուլ, ոչ դաւադիր-
ները գտնել : Ռուսական կառավա-
րութիւնն ո՛րչափ հզօր է, նոյնչափ ալ
իրեն արժանի ոստիկ մ'ունի Ռուսչա-
կանութիւնը : Կարելի է որ այս ո-
ստիկ ընկէի, բայց մինչև հիմայ եղած
փորձերուն նայելով՝ հաւանական է
որ այդ յեղափոխական կազմակերպու-
թիւնը շարունակէ փախուցաւոր լի-
նիլ : Կուրքո զորավարին յայտարա-
րութեան կը տեսնուի որ զինուորա-
կան նոր միջոցը և խառութիւնը ի
գործ պիտի դրուին : Բայց կ'ըսուի
թէ սպայից մի կարեւոր մասն մէջ ան-
գամ՝ Ռուսական զաւարտարներն յա-
ռաջ գնացած են : Վերջին պատե-
րադմին առթիւ՝ անոնք որ իրենց
ծառայութեան փոխարէն սպասուած
վարձը չընդունուեցան, տեղահան-
ու կարգէն անցած են, և ասոնք ըս-
պայից մեծագոյն մասը կը կազմեն :
Ռուսի կարելի է որ կուրքո զորավա-
րին այն խօսքը թէ «յեղափոխական
զաւարտարները չեն կրնար Ռուսիոյ
զօրաց հաւատարմութիւնը դրդուել»
չտա բացառութիւններ ունենայ :

Անգղիական խոշորագոյն բա-
ցումէն ի վեր նախարարաց ուղղեալ
հարցումներն իրարու կը յաջորդեն,
առանց նոր կամ կարեւոր իրադո-
ւի վեր հանելու : Լորտ Պրինսֆիլս
պատասխանելով Լորտ Կրանֆիլի մի
հարցման՝ ըսաւ թէ Անգղիա Պարսից
կառավարութիւնն ազատած չէ Հէ-
րաթ զօրք զրկելու մասին գաշադ-
րութեամբ յանձն առած պարտակա-
նութենէն, և թէ Պարսկաստան մօ-
տերս առաջարկութիւններ ըրած է
Հէրաթի նկատմամբ, բայց տակաւին
որոշում մը տրուած չէ : Թուրքիոյ նը-
կատմամբ ալ հարցումներ եղան, և
ասոնց մին էր Պէրլինի դաշնադրին
23 յօդուածին գործադրութիւնը : Պ.
Պուրք պատասխանեց թէ Եւրոպա-
կան թուրքիոյ դաւադրաց մէջ յանձ-
նախուժելի կազմուած են տեղական
պիտոյից համար բարենորոգման ծը-
րագրերը քննելու նպատակաւ, ա-
կայն հարկ չկայ ըսելու թէ տակաւին
քննութեան և գործադրութեան մի-
ջեւ բաւական մեծ հեռաւորութիւն
կայ Ռուսականութեան նախարար Հա-
ֆիզ փաշայի վրայ եղած հարցման մը
պատասխանելով Պ. Պուրք ծանցեց թէ
անոր պատուանշան տրուելուն առ-
թիւ Սըր Հէնրի Լէյարտի նոր հրա-
հանգները զրկուած չեն : Պ. Պուրք
յարեք նաեւ թէ Գերմանի վաշտային
Հալեպի կուսակալ անուանուելուն
«ցաւալի լուր» առնուած է Սըր Հ.
Լէյարտի մի հեռագրէն, սակայն յու-
սաց որ Բ. Դուռն այսպիսի պաշտօ-

նաբաշխութեանց Եւրոպիոյ մէջ ու-
նեցած դէշ աղգեցութիւնը գիտնա-
լով ձեռնադրէ կը լինի Արգարեւ մին-
չև այսօր այնպիսի պաշտօնաբաշխու-
թիւն մը տեղի ունեցած չէ : Պէշիք-
թաշի Հօճային գործին կարգադրու-
թեանն ի վեր՝ Անգղիոյ դեռապահին
Բ. Դրան հետ անձնական յարաբերու-
թիւնները բարեւոքած են, ինչպէս
որ կրնայ տեսնուիլ դեռապահին անց-
եալ չարթու Բ. Դրան նախարարնե-
րուն տուած կողմնորոշ. յուսարի է
որ երկու տեղութեանց յարաբերու-
թիւններն աւելի սերտ և մտերմա-
կան են : Տէրութիւնը ալ անհատից
նման բարեկամներու պէտք ունին,
և ամեն անգամ որ համալուծած են թէ
Անգղիա թուրքիոյ ամենէն օգտա-
կար բարեկամը կրնայ լինիլ, կը բաղ-
ձան անշուշտ որ երկու տեղութեանց
յարաբերութիւնները մտերմական լի-
նին : Անգղիա թուրքիոյ անկման չը
փախաքիլ, այլ բարենորոգման, և
այս վերջինը կը ջանայ անշուշտ Անգ-
ղիոյ համակրութիւնը պահել, ուստի
Պ. Կլաւսթոնի նախարարութեան օ-
րով երուամիջ նախարար եղող Պ. Լոյի
մօտեւր ըրած պատեհախօսութեան այն
խօսքերը՝ թէ թուրքիա վերջին պա-
տեհադմին առթիւ Անգղիայէն օգ-
նութիւն չգտնելով՝ զայն կ'առէ և
կ'անարգէ, և թէ ասոր համար Անգ-
ղիոյ դեռապահին կողմէ պաշտօնան-
կութիւնը խնդրուած անձի մը արտա-
ւանջան չնօժուած է և ալիք, առա-
ւել ընդդէմօր կը կուսկցուի թեան
քննադատութիւններ համարելի են,
քան թէ ստուղ ութիւններ : Չեմք
զիտեր որ եթէ Պ. Լօ և իրենները
պաշտօնի գլուխ անցնին, ինչ պիտի
ընեն : Իրենց մեծ օկղբունքն է ան-
միջամտութիւն և խնայութիւն, այ-
սինքն թէ բաւ է որ Անգղիա որչափ
կարելի է չտա սակի ունեւայ, և աշ-
խարհ ինչ կուղէ թող լինի :

ՕՅՄԱՆՆԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՐԴՈՒՆԵՐ

ԵՒ ԱՆԳՂԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Անգղիոյ երեւոյթանալի ժողովին
ներկայ տարւոյ շրջանին առաջին նըս-
տին մէջ, եւմտական նախարար Սըր
Սթամֆօրթ Եօրթթօթ հետեւեալ պա-
տասխանը տուաւ Լորտ Հարթինթը-
նի բանախօսութեան այն մասերուն,
զորս մեր երկու նախընթաց թիւե-
րով թարգմանեցինք :

«Հարկ չեմ» տեսներ աղնիւ Լոր-
տին յարուցած բոլոր խնդրոց մանրա-
րամանութեանցը մէջ մանել : Թուր-
քիոյ վիճակը մեծ դժուարութիւն
ներ ներկայացնող վիճակ մ'է, թէեւ
Լորտ Հարթինթըն բնաւ դժուարու-
թիւն չնշմարել կը թուի : Անգլիոյ
և հասարակութեան ալ ըսուեցաւ որ
եթէ վիճ. Թագուհւոյն նախարարը

արտաքոյ կարգի և բոլորովին ձրի
ձեռնարկ մ'ըրած չլինէին, ամենայն
ինչ հանգիստ վիճակի մէջ կը մնար
և ոչինչ կրնար մտահոգութեան նիւթ
լինիլ : Եթէ դժուարութիւնը կային.
նոքա ալ չուտով կ'անհետանային :
Բայց մեք այդ դաւադարը չեմք ու-
նեցած : Մեք գիտցած եմք թէ
թուրքիոյ մէջ իրաց կացութիւնը խիստ
մեծ դժուարութիւններ ունէր : Ըմ-
բընած եմք թէ թուրք տեղութեան
բարենորոգումը՝ մեր արտաքին գոր-
ծոց նախարարութեան կողմանէ զըր-
ւած ծանուցագրով մը կատարուելիք
բան չէր, մինչև անգամ՝ եթէ այդ
ծանուցագիրն Աղապական կուսակ-
ցութեան վերաբերող նախարարի մը
ձեռամբ գրուէր, և արդէն Աղա-
տականը մասնաւոր համոթիւն ու-
նին այնպիսի ծանուցագրեր խմբա-
րելու և այնպիսի բարի խրատներ
տալու, որք բնաւ արդիւնք չեն ու-
նենար : (Ծիծաղ մը) : Համալուծած
եմք որ եթէ բան մը պիտի լինի
նի, այլ համակրութեամբ և յարա-
տեղութեամբ, շարունակեալ դիտու-
ղութեամբ, ինչպէս նաեւ լաւ կամ
գէշ ամեն տեսակ առթիւ օգուտ քա-
ղելով և զգացնել տալով ոչ միայն
թուրք կառավարութեան, այլ նաեւ
թուրքիոյ ժողովրդոյ (•••) թէ ու-
չափ հարկաւոր և փափաքելի են այդ-
բարենորոգումները : Եւ ահա այդ ըն-
թացքը բանած է մեր նշանաւոր դեա-
պանը՝ Սըր Հէնրի Լէյարտ : Նա ա-
մեն առթիւ օգուտ քաղած է ինչը
պատաւ բարենորոգմանց պնդելու հա-
մար, և վշտացուել է տեսնել որ թէ
խօսած և թէ՛ չխօսած ժամանակ քըն-
նադատութեան առարկայ կը լինի :
Դժուարութիւնը կարելի եղածին չափ
մեծ են, (հասկցանք), — և այն խն-
դիրն, որուն տխրաբերութիւն ըրաւ
աղնիւ Լորտը դրեթէ անարդական
եղանակաւ, — այն է Դրան եւմը
տական դժուարութիւնները, գործն
աւելի կը ծանրացնեն : Թուրքիա
խիստ մեծ պատերազմի մը հետեւու-
թիւններով և երմտական ահադին
կորուստներով ֆինասուած է, և ինք-
զինք ստիպած կը տեսնէ անմիջապէս
այնպիսի բարենորոգումներ ի գործ
գնելու, որք տարիներու գործ կըր-
նան լինիլ : (Մտիկ ըրէք, մտիկ ը-
րէք) : Իմ բոլոր կարենալ ըսելիքս սա
է թէ Անգղիական կառավարութիւնն
իւր ձեռնարկած գործէն չխուսափիր,
և թէ թուրքիոյ մէջ լուսադոյն վիճակ
մը հաստատելու համար իւր ձեռքէն
եկածն ի դուր զենք պիտի շարունա-
կէ : Նոր թուրքիոյ պիտի ներկայեմք
ժողովոյն, և իրեւ պատրաստութիւն
կրնամ ծանուցանել թէ այդ թղթոց
մէջ Օսմանեան Ասիոյ քանի մը կող-
մերուն դժբաղդ վիճակին նկատմամբ
աւելի զօրաւոր վերջով թիւններ պի-

տի տեսնուին. բայց այդ իսկ մեծ պատճառ մ'է ոչ թէ մեր ձեռնարկած դործէն ետ քաշուելու, այլ աւելի եռանդով զայն յառաջացնելու:

«Ազնիւ Լորտը միւս Եւրոպական խնդրոյ ալ ակնարկութիւն ըրաւ. — Գերմանիոյ և Աւստրիոյ յարաբերութեանց խնդրոյն, Գերմանական բանակին աւելնալուն և Եւրոպայի ընդհանուր կայունութեան. — և ըստ թէ ներկայէն աւելի վրդովիչ ժամանակ մը չէր դատել ինք, վրդովիչ այլ և այլ աղգաւ իրարու նկատմամբ բռնած ընթացիկ պատճառաւ, վրդովիչ այդ աղգաւ քաղաքական և ընկերական վիճակին պատճառաւ: Եւ ինչ հետեւութիւն կը հանէ ասիկցի ազնիւ Լորտն: Անդրիա իւր պատասխանատուութիւնները պէտք է եղեր սահմանափակէ, որպէս զի խաղաղ աշօք կարենայ նկատել բոլոր այս բաներն: Արդ, Տեմբը, եւ ճիշդ աւարտ հակառակն եղող հետեւութիւն մը կը հանեմ: (Հաւանութեան ձայներ.) Կրտսեր որ եթէ Եւրոպայ այդ վիճակին մէջ է, եթէ այդ վտանգները կան ինչնալու, չեմք կրնար Եւրոպայի խորհրդոյ մէջ մեր դիրքը ջնջել. Եւրոպայի խաղաղութեան ու բարդաւաճման համար դէշ կը լինի եթէ այդպէս ընեմք: (Բարձրաձայն հաւանութիւն.) Խորհրդարանական սովորութեանց յարմար չեմ տեսներ Գերմանիոյ և Աւստրիոյ յարաբերութեանց վրայ խօսել: Միայն կրնամ ըսել թէ ոչինչ աւելի հաճոյք կուտայ մեզ քան տեսնել որ մտերմական յարաբերութիւնք կըդռնուին այդ երկու կառավարութեանց միջև, ինչպէս որ կը հաւատարմ թէ կան արդարեւ: Այդ յարաբերութիւնք յիշեալ մեծ պետութեանց օգտակար պիտի լինին և Եւրոպական խաղաղութեան պահպանութեանը պիտի ձգտին: (Մտիկ ըրէք, մտիկ ըրէք:)

«Ազնիւ Լորտը Դանուբեան իշխանութիւնները նուաճելու մտօք գաղտնակցութիւն մը կենալուն վրայ կը խօսի: Բայց այս ալ ազատական կուսակցութեան միշտ մեզ դէմ դրած դրախտութիւններէն մին է: Դանուբեան իշխանութիւնք լաւ կը յառաջդիմեն: Եւրոպայի մը վրայ կ'աշխատեն, որ կը յառաջդիմէ զօհանուցիչ կերպիւ պիտի կարգադրէ. սահմանադրական կառավարութեան և իրենց յատուկ շահուց դարգացմանը մէջ յառաջդիմութիւններ կ'ընեն: (Մտիկ ըրէք, մտիկ ըրէք:)

Անոնց դիտարարպէս պէտք ունեցած բանն է միտակ թողուիլ, և որ և է տէրութենէ մը թեւաբեկութիւն կամ գլուխներ քոնսնել:

«Արտաքին խնդրոյ վրայ աւելի բան մը չպիտի ըսեմ: Կարծիքս սա է թէ այն խօսքերը զորս վերջ. Թագուհին բարեհաճած է ուղղել մեզ իւր ճառին մէջ, դործոյ արդի վիճակը ճշդիւ կը ներկայեն: Խորհրդարանի ընդհանուր ընթացքն՝ Եւրոպական խաղաղութեան պահպանութեան համար նոր ապահովութիւն տուած է, և Պէրլինի դաշնագրին գլխաւոր սկզբունքն ալ այս էր արդէն:»

Անդրիոյ ելմտական նախարարին այս բանախօսութեան մասնաւորապէս թուրքիոյ վերաբերեալ մասը քընդադարձութեան նկատ իրնայ լինիլ, և տարակոյս չկայ թէ Սըր ըմթաֆօրտ Նօրթօթի այդ յաճախ կըրկնուած խօսքերն իւր յուսացած աղդեցութիւնը չպիտի կրնան ընել ազատականաց վրայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս առաջին հոստի հետաքննչ:

Լուրտը 25 փետր.

Երեսփոխանաց Ժողովին մէջ Սըր Սթաֆօրտ Նօրթօթ հարցման մը պատասխանելով յայտարարեց թէ Անգլիոյ Պէրլինի վեհաժողովին 18րդ տեսնալութեան մէջ նշանակեալ միջազգային երեսփոխան յանձնարարին կողմէն համար որ և է ձեռնարկ մը չէ ըրած, և այս մասին Գաղղիա ալ որ և է յայտարարութիւն մը չէ ըրած: Անգլիական նախարարութեան: Ելեմտից նախարարն յարեց որ միւս տէրութեանց դիտարարութիւնները զիտնալէ առաջ անհնար է ըսել թէ ինչ ձեռնարկներ պիտի ընէ Անգլիա:

Սթէնտարտ լրագիրը կը հաստատէ թէ Հելլենական խնդրոյն լուծման համար Սալոնիքի մարքիզին ըրած առաջարկը Գուռն և Յաւաստանը դուրս կը թողու կաղնուելիք միջազգային յանձնարարին, որ տասն երկու անդամներէ պիտի բաղկանայ: Լորտ Սալոնիքի առաջարկութիւնը՝ Եանեան, Մէձօֆօն և Թըրհալա քաղաքը Թուրքիոյ ձեռքը կը թողու:

Պէրլին 25 փետր.

Նօրթ Տայչէ Ալիէմայնէ Յայթունի կէս պաշտօնական լրագիրը կըսէ թէ Գաղղիոյ և Ռուսիոյ սպառազինութիւնք ահապէս են և յարձակողական աշխարհափարութենէ մը ներշնչեալ:

Գերմանիոյ պատերազմական նախարարն յայտարարեց Գերմանական խորհրդարանին թէ Գերմանիոյ բանակին աւելնալը մտաւորապէս պատերազմի մը վախ կենալուն պատճառաւ չէր:

Փարիզ 25 փետր.

Տէպայի խմբագիր Պ. Շոն Լըմօնցի կեանք անդամ ընտրեցաւ Մերակուտի: Լուրտը 23 փետր.

Օստ. Բոնս.	41
Փոթ. 1865	42 3/4
» 1869	43 3/8
» 1871	67
» 1872	19 1/2
» 1873	11 1/4
» Եղիպոս.	36 3/8
Անգլ. Բոնս.	98 3/16

Փարիզ 25 փետր.

Օստ. Բոնս.	11.12 1/2
Գաղղ. »	80.0
» »	116.42 1/2
» »	Նոր 35.65

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մայրաքաղաքի Սերպիական դեսպան Պ. Ֆրիսթիլ, որ Վիեննայի դեսպան անուանած է, այսօր Վիեննայի թանկին կը ներկայանայ իւր հրաժեշտը մատուցանելու, յորմէ յետոյ Վառնայի ճանքով Կ. Պոլսէն պիտի մեկնի:

Վաղըթ իւր այս առաւօտեան թուով կը ծանուցանէ թէ Վիեննայի թանկին անձնական դանձուն վերադառնալու հրապարեան Յակոբ Էֆէնտին յիշեալ պաշտօնատան մէջ պէտք է զած բարեկարգմանը ծրագիր մը չինած լինելով, այժմ այդ բարեկարգմանց գործադրութեան ձեռքը դարձնուած է:

Ոսկեղջիւրի ծովափնայ արտօնատէր Միշէլ փաշան շարաթ օրը մայրաքաղաք վերադարձաւ: Կըսուի թէ պէտք է եղած դրամական օգնութիւնը դատած է, բայց իւր ծրագիրը կարեւոր շահուց դաշխուան պատճառաւ կը կարծուի թէ մեծ փոփոխութիւններ պիտի կրէ:

Բանի մ'օրէ ի վեր Եւրոպայի հըրապարակաց վրայ Օսմանեան արժէթղթոյ դիւնը բարձրանալով վրայ են: Լա թիւրքի լրագիրը փարիզէն եկած լուրերէ առնելով կը ծանուցանէ թէ Օսմանեան արժէթը:

Թոյ գրեւորուն բարեւորումն այն զըրոյցին հետեւանքն է եղեր թէ Օսմանեան ելեմտից կարգադրութեան համար Պէրլինի վեհաժողովին տառնադրութեանց միայն մէջ յանձնարարեալ միջազգային յանձնարարութիւնը կազմելու խօսք կայ:

Ջրոյց ելած է թէ Ենի բաղարի կողմը զինուորական կրթութիւնը Ենի Աւստրիական դորադնդի մը վրայ տեղւոյն իսլամ Ժողովրդեան կողմէ յարձակում մը լինելով, կուտեղի ունեցեր է: Բայց Թուրք լրագիրք կը յայտարարեն թէ տակաւին պաշտօնական լուր չկայ այս մասին:

Կըսուի թէ քառասուն փարանոյ արծաթ դրամներուն կեղծն ելած է, բայց գոյնէն և բոլորակէն չուտով կը ծանուցուի թէ և ուրիշ ամեն մասամբ շատ կը նմանի:

Ռուսիոյ կայսրն հրաման ըրեր է որ իւր դահակալութեան 23երորդ տարեգարձը բոլորովին առանձնական կերպիւ տօնուի:

Կը ծանուցուի թէ Պուրդար Եւրպիսկոպոսը յառաջիկայ մայիս ամսոյ մէջ Սինօք մը պիտի կազմեն ի թըրքական Երկրեցւոյ հետ միացման ծրագրին վրայ խորհելու: Բայտին է թէ Ռուսական երկրեցւոյ դուրսը նոյն իսկ ջարն է:

Լէվանթ Հէրալտ լրագիրն իւր երէկուան թուով հետեւեալ գէպքը կը պատմէ «Աւաղակութիւն ի Մալեդանիա» վերնագրով:

«Օսմանեան ոստիկանութեան ըստ պայներէն Անգլիոյ Սինօք գընդապետն, որ Սէլանիկէն երկու օր հեռու վերիա քաղաքին մօտ իւր ագարակին մէջ կը բնակէր, քսան և հինգ աւաղակաց խմբի մը կողմանէ անցեալ հինգ շաբթի օրը վերցուելով լեռը տարուած է: Գնդապետն առանց պէտքէ ինքզինք վտանգի մը մէջ դրած չէր. դրամ պահելու սովորութիւն չունէր, բայց իրենց հոգեբէն ու ստացուածքէն զրկուած իսլամաց օգնութեան համար Սըր Հէնրի Լէյարտի զրկած դրամները կը բաշխէր, և հաւանական է որ աւաղակաց յարձակման առթիւ տուողն այս իրողութիւնը լինի: Բայց յիշեալ դրամներն արդէն բաշխուած լինելով, աւաղակները բան մը չկըրցին դանել, և նոյն իսկ Պ. Սինօք լեռը տարին՝ փրկանք պահանջելու համար:

«Անգլիոյ գնդապետը Սէլանիկի ընդհանուր հիւպատոս Պ. Պլենթի նման մը զրկելով իմացուց որ իւր կեանքը վտանգի մէջ է եթէ փրկանքի գումարը չուտով չգրկուի: Խնդրեց նաև որ աւաղակաց վրայ զօր չզրկուի, որովհետեւ այն ժամանակ ստուգել պիտի մեղցնէր զինք, Հիւպատոսն անմիջապէս Սըր Հ. Լէյարտի հեռագրեց, որ փութաց յարաբերութեան մէջ մտնել Օսմանական վարութեան և Լոնտոնի արտաքին գործոց նախարարութեան հետ: Դուռը Սէլանիկի կուսակալին հեռագրեց որ Անգլիոյ ընդհանուր հիւպատոսին փափաքանց համեմատ դործէ: և Լոնտոնի արտաքին գործոց նախարարութիւնն ալ պատասխան զրկեց որ չափաւոր դուռ մը կրնայ վճարուիլ Պ. Սինօքի փրկանքին համար: Դեսպանն այս պատասխանը Սէլանիկի հիւպատոսին հաղորդեց, յորմէ նոր տեղեկութեանց կըսպասուի: Բայց միւս կողմէն Անգլիական

ինվիլիտը զրահաւորն և Ք. քէթ անուն ըօրվէթը Պիրէոս գետուող Անգլիական նաւախմբէն զատուելով Սէլանիկ երթալու հրաման ստացան, և արդէն ճանրայ ելած են:

Լա թիւրքի լրագիրը ցաւով կը ծանուցանէ թէ մայրաքաղաքի մը ընկերացի նոր խմբերը կազմուց Զէնիէի կոմը վերջերս յաճախակի պատահած հրդեհներուն մասնաւոր Օրթաքէօյի վերջին հրդեհին մէջ չափէ դուրս աշխատած լինելով հիւանդացիներ է:

Տփղիսի լրագիրք կը ծանուցանէ թէ Ռուսական Հայաստանի մէջ Կարի գաւառն ալ սով ծագած է: Իբրեւ մասնաւոր պատճառ ցոյց կը արուի սա կարեւոր իրողութիւնը թէ յիշեալ գաւառին իսլամականաց մեծ մասն Օսմանեան Հայաստան անցած և Ռուսիոյ կառավարութիւնն ակնարար գաւառին մէջ բաց մնացած հողերը Մալականաց տուած լինելով, երկրագործութիւնը խիստ յետին վիճակի մէջ մնացած էր:

Մալականք երկրագործութեան հող չեն տանիր, այլ ձի կը հասցընեն, և հետեւաբար ոչ թէ արտադրող՝ այլ սպառող ժողովուրդ մ'են:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ		
Է Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է		
Երէկ իրիկուն գոցուեցաւ	42.3	
Այս առաւօտ բացուեցաւ	41.32	
Կէս օրին	41.32	
Բուսնիկի երկաթուղի	Փր.	38 75
Թուրքիոյ	Իւր.	745
Թրակիայ	Օսմ. իւր.	3,30
ԵՐԹԱՅՐ ԴՐԱՄՈՅ		
12 փետրվար		
Անգլ. իւր.	ըր.	110 2
Նարթիկի սակի	»	87 17
Իմիւսիկ Ռուս	»	90 4
Ռուսական թղթադրամ 8 լուր	80 քարիք	
Գըլլիկ	ըր.	51 30
Մէհիսիկի տարեկան թիւն	»	7 28
Հինգ շոյց	»	21
Մէթալիք	»	21
Պղինձ	»	465 —
» 8 փարանոց	»	462

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կարուածական և անցադրական Իլմու խաղէրներուն այսուհետեւ Կ. Պոլսոյ թաղապետութեան կողմէ և միքտարաց տարագրութեամբ արուիլը վերջնական կերպիւ որոշուած լինելով, Պատրիարքարանի Թէոքրէքէլեանէ կոչուած գրասենեակը բնականաբար դոյուիլ հարկ կը լինի: Եւ այսպէս Աղղ. Հիւանդանոցը տարին 100 հազար զուռի հասոյթէ մը կը զըրկուի:

Լաճնուս նայելով, Ս. Պատրիարք Հայրն Հիւանդանոցին կրած այս փնտրութ. Դրան ուշադրութեանը ներկայելով, անոր տեղ գոնէ ուրիշ հասոյթ մը ցոյց արուիլը խնդրեց է կամ պիտի խնդրէ:

Մայրաքաղաքի Աւստրական նուրնտիր դեսպան Տուպաքի կոմը չաւաթ իրիկուն Գուռ-Գալու Հայոց Պատրիարքարանն երթալով՝ փոխադարձ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր:

Կը լսեմք թէ Օրթաքէօյի լրատւան մէջ շարաթ իրիկուն Գեր. Օրմանեան Տ. Մաղաքիա Ծ. վարդապետին ըրած բանախօսութիւնը մեծ գոհութիւն պատճառեւ ունեկընդրաց, և 20 ոսկի հաւաքուեր է ի նպատակ սովելոց:

Ռիօ տը Նասիլյոս
3 սաղթիկ 1868
(Ստորագրեալ) Գ. Մփիլի, Ընդունեցե՛ք նա
Աւելի Ընդարձակ տեղեկութեանց և վարչականներու վարեցողին համար,
այսպէս է դիմել առ ՅՈՒՀԱՆՆԵՍ ԱՐԵՆՈՒՆԻ Գլխիկան գործարանին ցարդ
գործակատարն Տաճկաստանի և Պուլղարից համար, Առաջան թիվ 9- և կամ առ
Պ. Մ. ՊԱՆԻՆՆԻ, մեշտաւաղմէ Առաջան թիվ 1 :